

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Մայիսի 6-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, որին ներկա էին ընկ. ընկ. Կ. Ս. Գեմիրեյանը, Բ. Ծ. Սարգիսովը, Ֆ. Տ. Սարգսյանը, Կ. Լ. Գալյաբյանը, Լ. Ն. Ներսիսյանը, ՀՍՄՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Ցու. Ծ. Խոջամիրյանը, ՀԿԿ Կենտկոմի բաժինների վարիչներ Ա. Պ. Մելիքոնյանը, Մ. Խ. Քոբայանը:

Ներածական խոսքով ժողովը բացեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը: Նա ընդգծեց, որ հանրապետության գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը տեղի է ունենում Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած պատմական հաղթանակի բառասունամյակի նախօրյակին: Նշելով այդ պանծալի տոներ, գիտության աշխատողները հպարտությամբ են վերհիշում այն դերը, որ խաղաց գիտությունը մեծ հաղթանակի գործում: Այն ժամանակվա գիտական լարված աշխատանքը ոչ միայն օգնեց սովետական ժողովրդի հաղթանակին, այլև հիմք ծառայեց գիտական այն վերելքի համար, որը մեզ հասցրեց մինչև երկրի առաջին արհեստական արբանյակների արձակումը, տիեզերական հետազոտությունները, ատոմային էներգիային տիրապետելը և լազերների հայտնագործումը:

Այնուհետև Վ. Հ. Համբարձումյանն ասաց, որ կուսակցության Կենտկոմի 1985 թ. ապրիլյան պլենումը նշեց երկրի տնտեսական և մշակութային նոր վերելքն ապահովելու ուղին: Պետք է հսկայական խնդիրներ լուծել ամբողջ աշխատանքի ինտենսիվացման և նրա արդյունավետության բարձրացման բնագավառում: Դրանց հասնելու դիպվոր միջոցներից են մի կողմից կարգ ու կանոնի հաստատումը, մյուս կողմից՝ գիտատեխնիկական առաջադիմության օգտագործումը: Ուստի, ավելի խիստ պահանջներ են ներկայացվում բոլոր գիտական հիմնարկներին, այդ թվում և գիտությունների ակադեմիաներին, որոնց հիմնարար հետազոտությունները պետք է գործնական և տնտեսական խնդիրների լուծման նոր ուղիներ բացեն:

Հաշվետու ժամանակաշրջանում, նշեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտը, ՀԿԿ Կենտկոմը բազմիցս անդրադարձել է գիտությունների ակադեմիայի և նրա գի-

տական հիմնարկների գործունեությանը, պահանջելով բարձրացնել գիտական աշխատանքի արդյունավետությունը և նպատակասլացությունը, ամրապնդել կապը հանրապետության ժողովրդական տնտեսության հետ: Դրա շնորհիվ անցած տարում ձեռք են բերվել ավելի շատ գիտական և կիրառական արդյունքներ, քան նախորդ տարիներին:

Այնուհետև Վ. Հ. Համբարձումյանն անդրադարձավ գիտական տարբեր հիմնարկների կատարած տեսական ու գործնական կարևոր նըշանակություն ունեցող աշխատանքներին, դրանց տվեց բարձր գնահատական և շնչտեց առանձին գիտական կոլեկտիվների աշխատանքը բարելավելու, այն այսօրվա հրատապ խնդիրների լուծմանը ծառայեցնելու անհրաժեշտությունը: Խոսելով գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների երկու բաժանմունքների գործունեության մասին, Վ. Հ. Համբարձումյանը նկատեց, որ նրանք աշխատել են զգալի արդյունավետությամբ: Կարևոր նվաճում է հայ ժողովրդի պատմության ութհատորյակի հրատարակության ավարտը: Այնուհետև նա հանգամանորեն խոսեց գիտական աշխատանքների ինտենսիվացման, գիտական հետազոտությունների բնագավառում հաշվողական տեխնիկայի լայն արմատավորման մասին, նշեց այն մեծ օգնությունը, որ ցույց է տալիս ՀԿԿ Կենտկոմը՝ երիտասարդ գիտական կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման գործում:

Վերջում Վ. Հ. Համբարձումյանը հավաստիացրեց, որ հանրապետության գիտնականներն այնուհետև են պատվով կկատարեն իրենց առջև դրված խնդիրները և կուսակցության XXVII համագումարը կդիմավորեն նոր նվաճումներով:

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի 1984 թ. գիտական և կազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին ղեկուցումով հանդես եկավ ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՄՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ա. Գալաբյանը: Նա ընդգծեց երկրի սոցիալ-տնտեսական նվաճումների ապահովման գործում հայրենական գիտության դերի մեծացման, նրա ինտենսիվ զարգացումը ժողովրդական տնտեսության շահերին առավել արդյունավետորեն ծառայեցնելու կարևորությունը և կուսակցության առաջադրած նոր պահանջների լույսի

ներքո վերլուծեց հաշվետու ժամանակաշրջանում հանրապետության գիտությունների ակադեմիայի ձեռքբերումները: Զեկուցողը նշեց, որ հաշվետու տարում Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի համակարգում գիտական աշխատանքներ են կատարվել 141 պրոբլեմների զոմ: Այժմ ակադեմիայի հիմնարկները մասնակցում են Միության 18 և հանրապետության 2 կոմպլեքս ծրագրերի իրագործմանը: Դրա հետ մեկտեղ մի շարք ինստիտուտներ պայմանագրային կարգով գիտական հետազոտություններ են կատարում տարբեր միավորումների, հիմնարկների և կազմակերպությունների համար: Գ. Ա. Գալույանն ընդգծեց, որ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գիտակադամական համար կարևոր նշանակություն են ունեցել «Ժողովրդական տնտեսության մեջ գիտատեխնիկական առաջադիմությունն արագացնելու միջոցառումների մասին» ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումը, «Համաստանի հանրապետական կուսակցական կազմակերպությունում ՍՄԿԿ Կենտկոմի 1983 թ. հունիսյան պլենումի որոշումների կատարման ընթացքի մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը, գիտատեխնիկական առաջադիմության արագացման վերաբերյալ 2ԿԿ Կենտկոմի և հանրապետության կառավարության մշակած միջոցառումները:

Զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Ա. Բ. Նալբանդյանը, Է. Մ. Զբրաչյանը, թղթակից անդամներ Վ. Վ. Ալեքսեևսկին և Գ. Մ. Հեռուկին:

Այնուհետև 1941—1945 թթ. Հայրենական

մեծ պատերազմում սովետական ժողովրդի աջակցության համաշխարհային պատմական նշանակությունը թեմայով զեկուցմամբ հանդես եկավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանը:

Տարեկան ընդհանուր ժողովում տեղի ունեցավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պարզևեների հանձնման ամենամյա հանդեսավոր արտոլությունը:

Բազմաբեղուն և հանրագուտ գիտական գործունեության համար «Մեծարման գիր» ստացավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Մ. Վ. Կառլյանը:

Գիտության զարգացման գործում ներդրած մեծ ավանդի համար «Կառավարչական պարգևատրվեցին» - Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամներ Ա. Տ. Առլանյանը, Բ. Լ. Արքաճաճյանը, Ռ. Վ. Վարդաճաճյանը, կենսաբանական գիտությունների դոկտոր Ս. Մ. Ձարլուկով-Խեճոչյանը, պատմական գիտությունների դոկտոր Ե. Ղ. Սաբալյանը, բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Գ. Արքաճաճյանը, տեխնիկական գիտությունների թեկնածու Ս. Ս. Կառլանյանը և պատմական գիտությունների թեկնածու Ե. Մ. Խաչիյանը:

Գիտահետազոտական արդյունավետ գործունեության համար մի մեծ խումբ գիտնականների հանձնվեց «Գովեստագիր»:

Առաջին անգամ հանձնվեցին երիտասարդ գիտնականի մրցանակի դափնեկրի դիպլոմներ: Մի շարք աշխատողներ ստացան Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախազահության պատվոգրեր:

Դրանով Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովում ավարտեց իր աշխատանքը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԼԱՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱԼՄՈՒՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մայիսի 5-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի տարեկան ժողովը: Բաժանմունքի 1984 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանը: Նա նշեց, որ առաջնորդվելով ՍՄԿԿ XXVI համագումարի, հետհամագումարյան պլենումների, ինչպես նաև 2ԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի որոշումներով, բաժանմունքի գիտական հիմնարկները հաշվետու տարում զգալի աշխատանք են կատարել: Բաժանմունքի գիտական հիմնարկների կարևոր նվաճումներից է ԼԵՄԵՐ 5—7

1986—2005 թթ. Հայկական ՍՍՀ գիտահետազոտական առաջադիմության կոմպլեքսային ծրագրի մշակումը, որը հիմնարար գիտական աշխատանք է և օգտագործվում է երկարաժամկետ պլանների մշակման համար:

Անդրադառնալով բաժանմունքի գիտական հիմնարկների գործունեության արդյունքներին, զեկուցողը նշեց, որ հետազոտություններում առանձնահատուկ տեղ է հատկացվել մեր հանրապետության տնտեսական ու սոցիալական զարգացման արդի փուլի առանձնահատկությունների ուսումնասիրությանը, սոցիալիստական հասարակարգի կառուցիչագործման պրոբլեմների մշակմանը: Բացի այդ, բաժանմունքի գիտական հիմնարկները մեծ տեղ են հատկացրել տնտես-

թյան ու պրակտիկայի հրատապ հարցերի բազմակողմանի ուսումնասիրմանն ու իմաստավորմանը, դրանք գործնական նշանակության բացահայտմանը, խոսելով բաժանմունքի գիտական հիմնադրերի առջև դրված խնդիրների մասին, Բ. Ն. Առաքելյանը շեշտեց բուրժուական գաղափարախոսության դեմ պայքարի ուժեղացման անհրաժեշտությունը և նշեց այն շնորհակալ աշխատանքը, որ այդ բնագավառում կատարում են հանրապետության գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների գծով հրատարակվող պարբերականները՝ «Պատմա-բանասիրական հանդեսը» և «Երաբեր հասարակական գիտություններին» ամսագիրը:

Այնուհետև զեկուցողը կանգ առավ բաժանմունքի գիտական հիմնարկներում տեղ գտած թիրությունների և աշխատանքներին խանգարող հանգամանքների վրա:

Զեկուցման շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Մ. Գ.

Ներսիսյանը, Գ. Բ. Ղարիբջանյանը և Ա. Ա. Առաքելյանը: Նրանք հավանություն տվեցին հաշվետու ղեկուցմանը և խոսեցին պատմության թուրքական կեղծարարների դեմ պայքարի ուժեղացման, պատմության պետական թանգարանը ակադեմիայի համակարգի մեջ մտցնելու, Արևելագիտության ինստիտուտի գրադարանի պայմանների բարելավման, արտասահմանյան գործուղումները կազմակերպված հիմքերի վրա գնելու, որակյալ քաղաքատնտեսական կադրերի պատրաստման անհրաժեշտության և այլ հարցերի մասին:

Ժողովում գիտական ղեկուցումներով հանդես եկան պատմական գիտությունների դոկտորներ Խ. Հ. Բաբսելյանը և Ա. Մ. Հակոբյանը: Նրանցից առաջինը զեկուցեց «Հայ ժողովրդի ներդրումը Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի հաղթանակի մեջ» թեմայով, իսկ երկրորդի զեկուցման խորագիրն էր «Հյուսիսային Կովկասի ազատագրումը և հայկական Թամանյան դիվիզիայի մարտական ուղին»:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՓԵԼԻՍՈՓԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ �ԱԾԱՆՄՈՒՅՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՂՈՎՐԸ

Մայիսի 5-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ փոխտնօրինության և բանասիրության բաժանմունքի տարեկան ժողովը: Բաժանմունքի 1984 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Գ. Ա. Բերտյանը: Նա ասաց, որ հաշվետու տարում բաժանմունքը զգալի հաջողությունների է հասել ՍՄԿԿ XXVI, ՀԿԿ XXVII համագումարների, ՍՄԿԿ Կենտկոմի հուներսյան (1983 թ.) և հետագա պլենումների և ՀԿԿ Կենտկոմի համապատասխան որոշումների, ինչպես նաև հանրապետության ղեկավար մարմինների որոշումների կատարման ուղղությամբ: Բաժանմունքի գիտական հիմնարկներում ինտենսիվ աշխատանք է կատարվել կադրերի մասնագիտական և գաղափարաքաղաքական մակարդակի բարձրացման, աշխատանքային, պլանային և պետական կարգապահության ամրապնդման ուղղությամբ, ուժեղացվել է վերահսկողությունը գիտական աշխատակիցների կողմից՝ թեմատիկ սյանները ժամանակին կատարելու վրա: Զեկուցողը նշեց, որ գիտահետազոտական աշխատանքներն ընթացել են հետևյալ պարբերությունների ուղղությամբ՝ գիտական իմացության տեսության և տրամաբանության, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման, զարգացած սոցիալիզմի արտադրական հարաբերությունների կատարելագործման և սոցիալիստական ապրելակերպի ամրապնդման տեսական պրոբլեմներ, ՍՍՀՄ ժողովուրդների մշակույթների

պատմությունը և նրա տեղը համաշխարհային մշակույթում, գիտատեխնիկական հեղափոխության տեսական պրոբլեմներ, սովետական գրականություն և լեզվի պատմություն, պատմահամեմատական լեզվաբանություն, տեմիսաբանություն և այլն: Բաժանմունքի գիտական հիմնարկներում 24 հիմնական պրոբլեմների ուղղությամբ կատարվող գիտահետազոտական աշխատանքների շրջանակներում մշակվել է 43 թեմա, որից հաշվետու տարում ավարտվել է 1-ը: Զեկուցման շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Է. Բ. Աղայանը, Գ. Բ. Զեմուլյանը, թղթակից անդամ Ռ. Վ. Զարյանը և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Գ. Բ. Պետրոսյանը: Նրանք հավանություն տվեցին հաշվետու ղեկուցմանը և խոսեցին բաժանմունքի գիտական հիմնարկների նյութատեխնիկական բազայի ցածր մակարդակի, լեզվի և գրականության ինստիտուտների կարգի բարձրացման և անհրաժեշտության, բուհերի շրջանավորտների անբավարար որակավորման և այլ հարցերի մասին:

Ժողովում գիտական ղեկուցումներով հանդես եկան ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Է. Մ. Զրբաշյանը և տեխնիկական գիտությունների թեկնածու Ռ. Լ. Ուռուտյանը: Նրանցից առաջինը խոսեց Վահան Տերյանի ստեղծագործության գիտական ուսումնասիրության, իսկ երկրորդը՝ լեզվական հարցերի լուծման մեջ հաշվողական տեխնիկայի կիրառման մասին: